

ոլորտում փորձ ձեռք բերած երկրներում գործող տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակին: Այնուամենայնիվ, տեղական ինքնակառավարման զարգացման ռազմավարական ամրողական փաստաթղթի ընդունման, Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայում և ՀՀ օրենսդրության մեջ ամրագրված տեղական ինքնակառավարման սկզբունքների և դրանցից բխող մեխանիզմների փաստացի իրագործման, տեղական ինքնակառավարման ինստիտուցիոնալ զարգացման ուղղությամբ հետևողական աշխատանք կատարելու շնորհիվ կարելի էր արձանագրել ավելի բարձր արդյունքներ:

Հետևաբար, նախանշված նպատակների իրագործմանը պետք է ակտիվորեն նաև ակցեն ոչ միայն Հայաստանի իշխանությունները, այլև տեղական ինքնակառավարման զարգացման գործում շահագրգիռ կողմ հանդիսացող բոլոր մարմիններն ու կազմակերպությունները, ինչպես նաև գիտական ոլորտի հետազոտողները:

## ԷՄԻԼ ԶԱԼԻՆՅԱՆ

*ՀՊՏՀ հայցորդ*

### ԱՐՏԱՔԻՆ ՑՆՑՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԻ ԵՎ ԽՆԱՅՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվը վճարային հաշվեկշռի երկու հիմնական բաժիններից մեկն է և առևտրային հաշվեկշռի՝ ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման տարրերության, զուտ գործոնային եկամուտների և զուտ տրանսֆերտների գումարը: Միևնույն ժամանակ այն նաև հավասար է երկրի գուտ արտաքին ակտիվների փոփոխությանը և կարող է ներկայացվել որպես ազգային խնայողությունների և ներդրումների՝ համախառն կուտակման տարրերություն: Հետևաբար ընթացիկ հաշվի վրա արտաքին տնտեսական ցնցումների ազդեցության հարցը կարող է հանգել ինչպես առևտրային հաշվեկշռի, այնպես էլ խնայողությունների և ներդրումների տարրերության վրա ազդեցությանը:

2009 թվականին Հայաստանի Հանրապետությունն ունեցել է վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի բացասական հաշվեմնացորդ՝ 1368.9 մլն ԱՄՆ դոլարի չափով, որը կազմել է նույն տարվա համախառն ներքին արդյունքի 16.0%-ը: Բոլոր ժամանակների առավելագույն արժեքն արձանագրվել էր 1998 թվականին, երբ ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ հավասար էր 21.2%-ի: Այս ցուցանիշի նվազագույն մակարդակը թե՛ բացարձակ, թե՛ հարաբերական արտահայտությամբ դիտվել էր 2004 թվականին և կազմում էր համապատասխանաբար 19.6 մլն ԱՄՆ դոլար կամ 0.5%-ը ՀՆԱ-ի նկատմամբ, որից հետո այն ունեցել է շարունակական ավելացման միտում<sup>1</sup>:

2008 թվականին Արմույթի միջազգային հիմնադրամի անդամ և ընթացիկ հաշվի պակասուրդ ունեցող 126 երկրների մեջ ՀՆԱ-ի նկատմամբ ընթացիկ հաշվի պակասուրդի ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում էր 50-րդ տեղը, իսկ արդեն 2009 թվականին պակասուրդային երկրների թիվն ավելացավ 5-ով՝ հասնելով 131-ի, որոնց մեջ Հայաստանը

<sup>1</sup> Աղյուրը՝ ՀՀ ԱՎԾ-ի «ՀՀ վճարային հաշվեկշռով» վիճակագրական ժողովածուները:

նույն ցուցանիշի մեծությամբ 22-րդն էր<sup>1</sup>: Բացի այդ, 2008թ. ընթացիկ հաշվի պակասուրդով 126 երկրներից 29-ն ունեցել են ընթացիկ հաշվի վատքարացում, այդ թվում նաև Հայաստանը: Ավելին, Հայաստանի՝ ՀՆԱ-ի նկատմամբ ընթացիկ հաշվի հաշվեմնացորդի բացասական փոփոխությունը 2009 թվականին հավասար էր 4.1 տոկոսային կետի, որն իր մեծությամբ 8-րդ ամենամեծ վատքարացումն էր: Հայաստանից ավելի վատ զարգացում են ունեցել միայն Բելառուսը, Սողոմյան կղզիները, Եմենը, Զիմբարվեն, Բուտանը, Նիգերը և Չաղը: ԱՊՀ երկրների ընթացիկ հաշվի հաշվեմնացորդի միջին բացասական փոփոխությունը 2009թ. կազմել է 2.3 տոկոսային կետ, իսկ զարգացող երկրներինը՝ 1.8 տոկոսային կետ:

Իսկ ինչ վերաբերում է ընթացիկ հաշվի հիմնական հոդվածին՝ առևտրային հաշվեկշռին (առանց «Ծառայություններ» հոդվածի), ապա այն նույնպես 2009 թվականին եղել է բացասական և հավասար էր 2081.2 մլն ԱՄՆ դոլարի կամ ՀՆԱ-ի 24.4%-ի, որը միևնույն ցուցանիշի՝ 2005 թվականին դիտված նվազագույն արժեքը գերազանցում էր շուրջ երկու անգամ:

Սույն հոդվածում ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի վրա արտաքին ցնցումների ազդեցության բնույթը և աստիճանը գնահատելու համար ընդունել ենք վճարային հաշվեկշռի կազմալրուծման հիմնական մեթոդաբանությունը, որ մշակվել է Բալասայի<sup>2</sup> կողմից 1981թ. և այնուհետև կատարելագործվել Ավիլայի և Բաչայի կողմից: Այս մեթոդաբանությամբ արտաքին ցնցումները և տնտեսության ներքին արձագանքներն ու հարմարեցումները վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի փոփոխության որոշիչներն են: Ներմուծման ծավալները կապված են ներքին արտորքցիայի հետ, իսկ արտահանման ծավալները՝ համաշխարհային առևտրի ծավալների հետ: Տոկոսային վճարները կապված են տոկոսադրույթի և պարտքի կուտակված պաշարի հետ: Առաջնային արտաքին ցնցումները վերաբերում են առևտրի պայմաններին՝ արտահանման և ներմուծման գներին, արտաքին պարտքի տոկոսադրույթին և համաշխարհային առևտրի ծավալին: Երկրորդային արտաքին ցնցումներն են պարտքի կուտակման բեռը և այլ արտաքին փոփոխականներ, ինչպիսիք են՝ եկամուտները կապիտալի մասնակցությունից, աշխատողների եկամուտները և ընթացիկ տրամադրերները: Չնայած արտաքին փոփոխականներ լինելուն՝ դրանք նաև զգայուն են ներքին քաղաքականությունների և մասնավոր հատկածի հարմարվողական վարքագծի նկատմամբ: Եվ վերջապես, ներքին արձագանքնան փոփոխականները կազմված են ներքին կլանումից, արտահանման թափանցելիությունից և ներմուծման փոխարինումից: Ներքին կլանման վրա գլխավորապես ազդում են երկրի հարկարյուջետային և դրամավարկային քաղաքականությունները, իսկ արտահանման թափանցելիության և ներմուծման փոխարինման վրա՝ առևտրային քաղաքականությունը:

Աղյուսակ 1-ում ներկայացված ՀՀ ընթացիկ հաշվի հաշվեմնացորդի վերլուծության արդյունքներն արտահայտված են տոկոսային կետերով ՀՆԱ-ի նկատմամբ և ցույց են տալիս, որ արտաքին տնտեսական ցնցումների գույտ ազդեցությունը ՀՆԱ-ի նկատմամբ ընթացիկ հաշվի հաշվեմնացորդի փոփոխության վրա եղել է գերազանցապես բացասական, բացառությամբ 2000 և 2002 թվականների:

<sup>1</sup> Աղյուրը՝ IMF World Economic Outlook October Database,

<http://www.imf.org/external/pubs/ft/weo/2010/02/weodata/index.aspx>:

<sup>2</sup> Bela Balassa, “Policy Responses to Exogenous Shocks in Developing Countries”, The American Economic Review, Vol. 76, No.2, May 1986, pp. 75-78.

**Աղյուսակ 1**

**ՀՆԱ-ի նկատմամբ ՀՀ ընթացիկ հաշվի հաշվեմնացորդի փոփոխության գործոնային  
վերլուծությունը՝ ըստ առանձին արտաքին ցնցումների**

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009
<b>Ընթացիկ հաշվեմնացորդի փոփոխությունը (ՀՆԱ-ի նկատմամբ)</b>	<b>0.013</b>	<b>0.031</b>	<b>0.041</b>	<b>0.002</b>	<b>0.018</b>	<b>0.037</b>	<b>-0.013</b>	<b>-0.044</b>	<b>-0.044</b>	<b>-0.034</b>
<b>Արտաքին ցնցումներ</b>	<b>0.005</b>	<b>-2.619</b>	<b>0.189</b>	<b>-1.076</b>	<b>-2.865</b>	<b>-3.747</b>	<b>-3.719</b>	<b>-2.228</b>	<b>-4.726</b>	<b>-9.533</b>
Առևտուրի պայմանների էֆեկտ	-1.176	-0.699	0.988	-0.952	-2.333	-1.946	-2.707	-0.635	-4.145	-9.831
Ներմուծման զների էֆեկտ	-1.591	0.679	-0.297	-2.055	-2.405	-1.338	-2.762	-0.551	-4.090	-8.647
Արտահանման զների էֆեկտ	0.415	-1.379	1.285	1.103	0.072	-0.608	0.055	-0.083	-0.055	-1.185
Տոկոսադրույթի ցնցում	0.001	0.000	0.000	0.000	0.000	0.001	0.000	0.001	0.000	-0.003
Համաշխարհային առևտուրի էֆեկտ	1.183	-1.907	-0.797	-0.125	-0.523	-1.831	-1.020	-1.583	-0.592	0.319
Պարտքի կուտակման բեռն	0.000	0.000	0.000	0.000	0.000	0.000	0.000	0.000	0.000	0.000
Այլ արտաքին փոփոխականներ	-0.002	-0.012	-0.003	0.001	-0.009	0.029	0.008	-0.011	0.011	-0.018
Եկամուտներ կապիտալի մասնակցությունից	-0.004	0.010	-0.004	-0.007	-0.026	0.004	-0.003	0.002	0.013	-0.014
Աշխատողների եկամուտներ	-0.002	-0.006	0.010	0.003	0.002	0.010	0.010	-0.007	0.003	-0.001
Ընթացիկ տրանսֆերներ	0.004	-0.016	-0.009	0.005	0.015	0.014	0.002	-0.006	-0.005	-0.002
<b>Ներքին հարմարեցումներ</b>	<b>-1.147</b>	<b>6.824</b>	<b>2.697</b>	<b>2.569</b>	<b>5.540</b>	<b>6.314</b>	<b>-1.424</b>	<b>-1.339</b>	<b>-4.955</b>	<b>0.119</b>
Ներքին արտորքիա	-0.430	0.832	1.090	0.861	0.086	0.287	-0.488	-0.402	-0.890	-1.435
Մասմակոր սպառում	-0.287	1.148	1.148	1.722	0.287	2.009	0.803	0.201	0.029	-2.841
Պետական սպառում	0.000	0.287	0.287	0.000	0.000	-0.287	0.258	-0.057	-0.029	-0.631
Ներդրումներ	-0.172	-0.344	-0.545	-0.746	-0.172	-1.607	-1.550	-0.545	-0.890	2.037
Ներմուծման փոխարինում	-2.142	0.708	-0.840	-2.391	7.014	-0.258	3.914	-1.477	1.070	2.637
Արտահանման քափանցում	1.424	5.284	2.447	4.100	-1.560	6.285	-4.851	0.540	-5.136	-1.083
<b>Այլ գործումներ</b>	<b>1.155</b>	<b>-4.174</b>	<b>-2.845</b>	<b>-1.492</b>	<b>-2.657</b>	<b>-2.529</b>	<b>5.131</b>	<b>3.522</b>	<b>9.638</b>	<b>9.380</b>

Առանձնացված արտաքին տնտեսական ցնցումներից ոչ նշանակալի են եղել տոկոսադրույթի ցնցումները և արտաքին պարտքի կուտակման բեռն: Պարտքի կուտակման բեռնի պարագայում այն համարյա զրոյական է, իսկ տոկոսադրույթի ցնցումների դեպքում՝ առավելագույնը 0.1-ից մինչև 0.3 տոկոսային կետ: Սա զարմանալի քացահայտում չէ, քանզի տոկոսադրույթների նկատմամբ առավել զգայուն պորտֆելային ներդրումների ծավալներն աննշան են, իսկ արտաքին պետական պարտքի մեջ արտոնյալ վարկերի բաժինը կազմում է մոտ 99.1%:

Կապիտալի մասնակցությունից եկամուտները ցուցաբերել են առավել մեծ ազդեցություն, քան տոկոսադրույթի ցնցումները և պարտքի կուտակման բեռն: Այն եղել է դրական 2001, 2005, 2007 և 2008 թվականներին և կազմել է 0.5-1.3 տոկոսային կետ:

Աշխատողների եկամուտների և ընթացիկ տրանսֆերտների գումարային ազդեցությունը մինչև 2007 թվականը դրական էր, իսկ դրանից հետո բացասական՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով: Առավելագույն դրական էֆեկտը կազմում էր 2.5 տոկոսային կետ 2005 թվականին, իսկ առավելագույն բացասական փոփոխությունը՝ 2.2 տոկոսային կետ 2001 թվականին:

ՀՆԱ-ի նկատմամբ ընթացիկ հաշվի հաշվեմնացորդի փոփոխությունը պայմանավորող ամենանշանակալի գործոնն են առևտրի պայմանները՝ արտահանման և ներմուծման գների գուտ էֆեկտը: Ներմուծման գների ինդեքսի փոփոխությունը դիտարկվող ժամանակահատվածում ունեցել է ընթացիկ հաշվվը վատրարացնող ազդեցություն՝ ի տարբերություն արտահանման գների, որոնց փոփոխությունը եղել է դրական 2000, 2002-2004 և 2006 թվականներին: Եվ ինչպես ցույց են տալիս հավելված 26-ի գծապատկերները, ներմուծման գների բացասական ազդեցության չափը դրսերել է շարունակական աճի միտում: 2008 և 2009 թվականներին ներմուծման գների փոփոխություններով բացատրվել է արտաքին ցնցումների գուտ էֆեկտի համապատասխանաբար 86.5%-ը և 90.7%-ը, իսկ արտահանման գների փոփոխություններով՝ 1.2%-ը և 12.4%-ը:

Ընթացիկ հաշվի վրա արտաքին առևտրային գների՝ առևտրի պայմանների ազդեցություններն ընդարձակ կերպով հետազոտվել են 1950-ական թվականներից ի վեր, երբ Հարբերգերը<sup>1</sup> և Լաուրսենն ու Սեցլերը<sup>2</sup>, օգտագործելով մեկ ապրանքի վրա հիմնված թեյնսյան բաց տնտեսության մոդելներ, որոնցում ենթադրվում էր կապիտալի միջազգային հոսքերի բացակայություն, բացահայտեցին այն, ինչ այժմ հայտնի է որպես Հարբերգեր-Լաուրսեն-Սեցլերի էֆեկտ (այսուհետ՝ ՀԼՄ էֆեկտ): Վերջինիս համաձայն՝ առևտրի պայմանների վատրարացումը հանգեցնում է երկրի ընթացիկ եկամտի ավելի մեծ չափով նվազման, քան կայուն եկամտի նվազումն է, որի արդյունքում կրճատվում են խնայողությունները, և վատրարանում է ընթացիկ հաշիվը: Սակայն անհրաժեշտ է նկատել, որ տեսականորեն ընթացիկ հաշվի այսպիսի վարքագիծը դրսերվում է առևտրի պայմանների ժամանակավոր (կարճաժամկետ) փոփոխությունների դեպքում: Առևտրի պայմանների մշտական (երկարաժամկետ) փոփոխման դեպքում ընթացիկ և կայուն եկամուտները փոխվում են միևնույն չափով՝ անփոփի թողնելով ընթացիկ հաշիվը:

Հարբերգեր-Լաուրսեն-Սեցլեր էֆեկտը կարևոր դեր է խաղացել վճարային հաշվեկշռի, այդ բվում առևտրային հաշվեկշռի վրա արժույթի փոխարժեքի արժեքրկման ազդեցության վերլուծության առաձգականության և արտորքիայի մոտեցումների հարաբերական առավելությունների ուսումնասիրման գործում: Այն շարունակում է հանդիպել բաց տնտեսության մակրոտնտեսագիտության մեջ հավասարակռության խախտումների փոխանցման ուղիների վերաբերյալ քննարկումներում:

ՀԼՄ էֆեկտի բացահայտումից երեք տասնամյակ անց տարբեր հետինակներ այս հարցին անդրադարձան ներկայացուցական գործակալի դինամիկ օպտիմալացման մոդելների միջոցով: Այս ուղղությամբ աշխատանքը սկսեց Օքստֆելլը<sup>3</sup>, ով ցույց տվեց, թե ինչպես երկրի ժամանակային նախապատվության մակարդակի աճի դեպքում առևտրի պայմանների վատրարացումը հանգեցնում է խնայողությունների մակարդակի բարձրացման և ընթացիկ

<sup>1</sup> Harberger A.C., “Currency Depreciation, Income and the Balance of Trade”, Journal of Political Economy, No.58, University of Chicago Press, 1950, pp. 47-60.

<sup>2</sup> Laursen S. and L.A. Metzler, “Flexible Exchange Rates and The Theory of Employment”, Review of Economics and Statistics, No 32, 1950, pp. 281-299.

<sup>3</sup> Maurice Obstfeld, “Aggregate Spending and the Terms of Trade: Is There a Laursen-Metzler effect”, Working Paper No. 686, National Bureau of Economic Research, 1981, p 22.

հաշվի ավելցուկի՝ հակասելով Հարբերգեր-Լաուրսեն-Մեցլեր ենթադրությանը: Միջժամանակային օպտիմալացման մոդելի համատեքստում առևտրի պայմանների վատքարացումը հանգեցնում է ընթացիկ հաշվի ավելցուկի, քանի որ տնային տնտեսությունները սկսում են ձեռք բերել օտարերկրյա եկամտաբեր ակտիվներ իրենց իրական եկամտի սկզբնական մակարդակը վերականգնելու նպատակով:

Այլ հետազոտողներ ցույց տվեցին, որ ՀԼՄ ենթադրության իրավացիությունը նաև կախված է մոդելի ձևակերպման այլ առանձնահատկություններից: Օգտագործելով երկժամանակային մոդել՝ Սվենսոնն ու Ռազինը<sup>1</sup> ցույց տվեցին, որ ապրիորի ներմուծվող ապրանքների գների բարձրացման ազդեցությունն անորոշ է: Նրանք ուշադրություն դարձրեցին ներկայում և ապագայում սպառման սահմանային հակվածության հարաբերական մեծությունների վճռորոշ դերին ընթացիկ հաշվի վրա առևտրի պայմանների փոփոխության ազդեցության հարցում: Նրանց մոտեցումը նաև միավորում է տնտեսագիտական գրականությանը հայտնի առանձին տարրեր էֆեկտներ: Նրանք ուսումնասիրեցին առևտրի պայմանների ժամանակավոր և մշտական փոփոխություններին արտաքին առևտրի հաշվեկշռի արձագանքների միջև տարրերությունները: Առևտրի պայմանների վատքարացման պատճառով առևտրային հաշվեկշռի փոփոխությունները նրանք բաժանեցին երեք տարրեր էֆեկտների<sup>2</sup>:

1. ուղղակի էֆեկտը՝ զուտ արտահանման արժեքային փոփոխությունը,
2. սպառման վրա հարստության էֆեկտը, որը գործում է առևտրի պայմանների վատքարացման հետևանքով հարստության կրծատման միջոցով,
3. զուտ փոխարինման էֆեկտը, որ ազդում է սպառման վրա ներժամանակային և միջամանակային հարաբերական գների փոփոխությունների միջոցով:

Ընդհանուր առմամբ այս էֆեկտների գումարն անորոշ է, չնայած ուղղակի և հարստության էֆեկտների գումարը որոշակիորեն բացասական (դրական) է առևտրի պայմանների ժամանակավոր (ապագա) վատքարացման դեպքում: Առևտրի պայմանների ժամանակավոր վատքարացումն առաջացնում է երկու էֆեկտ՝ իրական եկամտի ժամանակավոր անկում և իրական տոկոսադրույթի փոփոխություն: Իրական եկամտի անկումը հանգեցնում է ուղղակի և հարստության բացասական էֆեկտների և հետևաբար առևտրային հաշվեկշռի վատքարացման, որովհետև սպառման և իրական եկամտի կրծատումը համաձանական չէ (սպառման սահմանային հակվածություն): Սա ծախսերի հարթեցման վարքագծի օրինակ է: Իրական տոկոսադրույթը նվազում է, ապա փոխարինման էֆեկտն ուժեղացնում է ուղղակի և հարստության էֆեկտները, և ընթացիկ հաշվի որոշակիորեն վատքարանում է:

Փոխարինման էֆեկտների առավել ընդարձակ վերլուծություն են ներկայացրել Քաշինն ու Սակ Դերմոտը: Նրանք ուսումնասիրել են միջժամանակային և ներժամանակային փոխարինման էֆեկտները<sup>3</sup>, որոնք կոչել են հարաբերական գների էֆեկտներ և առանձնացրել երկու հարաբերական գներ՝ ազգային գների մակարդակների հարաբերությունը (իրական փոխարժեք) և ներմուծման հարաբերական գինը (առևտրի պայմաններ): Միջժամանակային էֆեկտի դեպքում առևտրի պայմանների անբարենպաստ ցնցումը բանկացնում է ընթացիկ ներմուծումն ու սպառումը ապագա ներմուծման և սպառման համեմատ և դրդում սպառման տեղափոխումը ապագա ժամանակաշրջան, ինչի արդյունքում աճում են ընթացիկ խնայո-

<sup>1</sup> Svensson L. and Razin A., “The Terms of Trade and The Current Account: The Harberger-Laursen-Metzler Effect”, The Journal of Political Economy No. 91, 1983.

<sup>2</sup> Svensson L. and Razin A., “The Terms of Trade and The Current Account: The Harberger-Laursen-Metzler Effect”, The Journal of Political Economy No. 91, 1983, էջ 99.

<sup>3</sup> Paul Cashin, John McDermott, “Terms of Trade and the Current Account”, IMF Working Paper, 1998, p. 9.

դուրյունները: Միջմամանակային փոխարինման աստիճանը կախված է փոխարինման միջմամանակային առաձգականությունից: Որքան մեծ է առաձգականությունը, այնքան ավելի մեծ կլինեն ընթացիկ խնայողությունները:

Փոխարինման երկրորդ էֆեկտը տեղի ունի, եթե մողել են ներմուծվում չարտահանվող ապրանքները: Առևտրի պայմանների անբարենպաստ ցեցումը թանկացնում է ներմուծվող ապրանքների սպառումը չարտահանվող ապրանքների սպառման համեմատությամբ, ինչի հետևանքով տեղի է ունենում ներմուծվող ապրանքների փոխարինում չարտահանվող ապրանքներով (Ենթադրելով, որ դրանք միմյանց փոխարինող ապրանքներ են) և վերջիններիս զների բարձրացում: Չարտահանվող ապրանքների զների բարձրացումը ժամանակավորապես բարձրացնում է զների ընդհանուր մակարդակը՝ հարաբերականորեն թանկացնելով ընթացիկ սպառումը և խթանելով ընթացիկ խնայողությունների աճը: Ներմուծվող և չարտահանվող ապրանքների միջև փոխարինման չափը կախված է ներժամանակային առաձգականությունից: որքան բարձր է առաձգականությունը, այնքան մեծ է ընթացիկ խնայողությունների պատասխանն առևտրի պայմանների վատթարացմանը:

Առևտրի պայմանների փոփոխության էֆեկտը այլ դինամիկ էֆեկտներից առանձնացնելու նպատակով Սվենսոնն ու Ռազինը ուսումնասիրել են սպառողական նախապատվությունների ժամանակային փոփոխությունների դերը և գտել, որ իրական տոկոսադրույքների հաստատուն մակարդակի դեպքում առևտրի պայմանների մշտական վատթարացումն առևտրային հաշվեկշռի վատթարացման կամ բարելավման պատճառ է դառնում՝ կախված նրանից, թե սպառման ապագա սահմանային հակվածությունը կգերազանցի<sup>1</sup> սպառման ընթացիկ սահմանային հակվածությանը, թե<sup>2</sup> ոչ, կամ որ համարժեքն է, թե ժամանակային նախապատվության մակարդակը կնվազի<sup>3</sup>, թե<sup>4</sup> կամ<sup>5</sup>: Նմանատիպ եզրահանգման են եկել նաև Պերսոնն ու Սվենսոնը<sup>2</sup>, ովքեր, կիրառելով սերունդների մողել, ցույց տվեցին, որ առևտրի պայմանների փոփոխության ազդեցությունը կախված է ցնցման մշտական կամ ժամանակավոր, կանխատեսված կամ չկանխատեսված լինելուց:

Առևտրի պայմանների ազդեցությանը նոր չափում են ավելացնում Ագենորն ու Այզենմանը<sup>3</sup>: Նրանք ուսումնասիրել են առևտրի պայմանների ցնցումների ասիմետրիկ ազդեցությունը մասնավոր խնայողությունների վրա փոխառության սահմանափակումների առկայության դեպքում: Նրանք փաստարկներ են քերում, որ անբարենպաստ զարգացումների դեպքում փոխառության սահմանափակումների պայմաններում խնայողությունների մակարդակը կարող է զգայուն լինել առևտրի պայմանների մշտական դրական փոփոխությունների նկատմամբ՝ ի տարրերություն ավանդական սպառման հարթեցման մողելների կանխատեսումների:

Ամփոփելով նշված գրականության բացահայտումները՝ կարող ենք հստակորեն ասել, որ ընթացիկ հաշվի վրա առևտրի պայմանների ցնցումների ազդեցության ուղղությունը կախված է՝

- ցնցման ժամանակային տևողությունից,
- միջմամանակային և ներժամանակային փոխարինման առաձգականություններից,
- փոխատվական կապիտալի հասանելիությունից սպառման հարթեցման նպատակով:

<sup>1</sup> Svensson L. and Razin A., “The Terms of Trade and The Current Account: The Harberger-Laursen-Metzler Effect”, The Journal of Political Economy No. 91, 1983, p. 100.

<sup>2</sup> Persson T. and Svensson L., “Current Account Dynamics and the Terms of Trade: Harberger-Laursen-Metzler Two Generations Later”, Working Paper No. 1129, NBER, 1983.

<sup>3</sup> Pierre-Richard Agenor, Joshua Aizenman, “Savings and Terms of Trade under borrowing constraints”, Journal of International Economics 63, 2004, էջեր 321-340.

Վերոնշյալ Բալասսայի մեթոդաբանության գնահատականները մեզ տվյալներ են հաղորդում արտաքին ցնցումների մասշտաբների և ուղղության մասին, բայց չեն տարանջատում դրանք ըստ տևողության և տեղեկատվություն չեն հաղորդում ի պատասխան դրանց տնտեսական տնտեսությունների կամ առհասարակ տնտեսական գործակալների վարքագծի վերաբերյալ: Վերջինիս գնահատման նպատակով նպատակահարմար մոդելային հենք ենք համարում Գլիֆի և Ռոգոֆի մոդելի հետևյալ մոդիֆիկացված տարրերակը<sup>1</sup>.

$$\Delta CA = \gamma_0 + \gamma_1 I_{t-1} + \gamma_2 S_{tot}^t + \gamma_3 S_{tot}^p + \gamma_4 S_{gdp}^t + \gamma_5 S_{gdp}^p + \varepsilon_t \quad (1)$$

(1) ուեզրեսիոն հավասարման մեջ՝ որպես կախյալ փոփոխական, ծառայում է ընթացիկ հաշվի հաշվեմնացորդի փոփոխությունը ( $\Delta CA$ ), իսկ որպես անկախ փոփոխականներ՝ առևտրի պայմանների ( $S_{tot}^t, S_{tot}^p$ ) և ՀՆԱ-ի ցնցումները ( $S_{gdp}^t, S_{gdp}^p$ ): Ժամանակավոր և մշտական ցնցումների ազդեցությունը բացահայտելու նպատակով առևտրի պայմանների և ՀՆԱ-ի եռամսյակային սեզոնային հարթեցված տվյալների ժամանակային շարքերը բաժանել ենք ժամանակավոր և մշտական բաղադրիչների: Դրա համար Դիքի-Ֆուլերի ընդլայնված թեստի օգնությամբ ստուգել ենք արտաքին առևտրի գների և ՀՆԱ-ի շարքերի ստացիոնարությունը: Հաշվի առնելով բոլոր շարքերի առաջին կարգի ինտեգրածությունը՝ Բարբեր-Ջինգի ֆիլտրի միջոցով իրականացրել ենք պարբերաշրջանային (ժամանակավոր) և թրենդային (մշտական) բաղադրիչների առանձնացում: Հետևյալը ժամանակավոր և մշտական ցնցումները սահմանել ենք որպես պարբերաշրջանային և թրենդային արժեքների տարրերություն:

$$\Delta CA = 22.8 - 0.203I_{t-1} + 0.308S_{tot}^t + 0.693S_{tot}^p - 0.570\gamma_4 S_{gdp}^t - 0.404\gamma_5 S_{gdp}^p \quad (2)$$

Ուեզրեսիոն հավասարման գնահատման արդյունքում առևտրի պայմանների ցնցումների գործակիցները ստացել ենք դրական: Առևտրի պայմանների ժամանակավոր ցնցման դեպքում եկամուտների աճը մեծացնում է խնայողությունները, իսկ նվազումը՝ կրճատում դրանք, ինչը համապատասխանում է Հարբերգեր-Լաուրսեն-Մեցլերի հիպորեզին (Վարկածին): Տնտեսական գործակալները, կարճաժամկետում պահպանելով սպառման սովորույթները և սահմանային հակվածության մեծությունը, եկամուտների փոփոխությանն արձագանքում են դրա համեմատությամբ սպառման ծավալների ավելի քիչ փոփոխությամբ:

Առևտրի պայմանների մշտական ցնցումների գնահատված գործակցի դրական նշանն անսպասելի արդյունք է՝ ելնելով, ի պատասխան մշտական ցնցումների, ընթացիկ հաշվի անփոփոխության մասին ենթադրությունից: Այնուամենայնիվ այս արդյունքը համահունչ է Մենդոզայի բացահայտումներին առ այս, որ Հարբերգեր-Լաուրսեն-Մեցլեր էֆեկտը կախված չէ ցնցման տևողությունից<sup>2</sup>: Սա վկայում է անբարենպաստ ցնցումների դեպքում ներմուծման փոխարինման ցածր զգայունության, ինչպես նաև սպառման միջժամանակային փոխարինման ցածր առածգականության մասին: Մեր ստացած արդյունքների օգտին է խոսում նաև Հայաստանի համար սպառման միջժամանակային փոխարինման առածգականության գործակցի գնահատականը<sup>3</sup>: Կ. Պողոսյանի և Ա. Ակրտչյանի հետազոտական նյութի մեջ ՀՀ փաստացի մակրոտնտեսական տվյալների հիման վրա իրականացված հաշվարկները ցույց են տվել, որ «...Հայաստանի միջժամանակային փոխարինման առածգականության գործա-

<sup>1</sup> Joseph W. Gruber, “Productivity Shocks, Habits, and the Current Account”, Board of Governors of the Federal Reserve System, International Finance Discussion Papers, Number 733, August 2002, p. 13.

<sup>2</sup> Sergio V. Barone, Ricardo Descalzi, Alberto Diaz Caffarata, “Transitory and Permanent Terms of Trade Shocks and the Current Account in Latin American Countries”, International Society for Comparative Studies ISCES, Amoldshain IX Seminar, October 2009, p. 10.

<sup>3</sup> Պողոսյան Կ., Ակրտչյան Ա., Սպառման միջժամանակային փոխարինման առածգականության գործակցի գնահատականը՝ ՀՀ համար, 2007թ., էջ 72:

կիցը բավականին փոքր է, ... հետևաբար ՀՀ-ում իրական տոկոսադրույթի փոփոխությունը շատ քոյլ է ազդում բնակչության սպառողական վարքագծի վրա»:

Ժամանակային լազով ներդրումների և ՀՆԱ-ի ցնցումների գործակիցները սպասվածի պես ստացել են բացասական նշաններ՝ ունենալով ընթացիկ հաշիվը վատքարացնող ազդեցություն:

## Աղյուսակ 2

### Արտաքին տնտեսական ցնցումների նկատմամբ ՀՀ տնտեսության հարմարվողականության զգայունության վերլուծություն

<b>Մոդել՝ <math>PR_t = \beta_0 + \beta_1 * ES_t + \varepsilon_t</math></b>	<b><math>\beta_0</math></b>	<b><math>\beta_1</math></b>	<b>t վիճակ.</b>	<b>Adjusted R<sup>2</sup></b>
Մասնավոր սպառում	-3.62	1.39	(2.61)	0.39
Պետական սպառում	0.21	0.07	(3.03)	0.47
Ներմուծման փոխարինում	-0.69	-0.50	(-1.50)	0.12
Արտահանման բաժանցում	2.34	0.53	(1.14)	0.03

Ներքին հարմարեցման փոփոխականների՝ ներքին արտորքիայի, ներմուծման փոխարինման և արտահանման բաժանցման ստացված արժեքները, որոնք ներկայացրել ենք աղյուսակ 1-ում, քոյլ են տալիս Հայաստանի համար նաև գնահատելու տվյալ փոփոխականների զգայունությունները արտաքին ցնցումների նկատմամբ:

Զգայունության ռեգրեսիոն վերլուծության՝ աղյուսակ 2-ում ամփոփված արդյունքները ցույց են տալիս, որ նշանակալի են ստացվել միայն մասնավոր և պետական սպառման փոփոխականների գործակիցները և ընդհանուր առնամբ խոսում են տնտեսության թույլ հարմարվողականության մասին արտաքին անբարենպաստ ցնցումների նկատմամբ: Վերջիններս չեն հանգեցնում մասնավոր և պետական սպառման կրճատմանը ինչը կարող է մեղմել ընթացիկ հաշվի հաշվեմնացորդի վատքարացումը, այլ ընդհակառակը: Ի պատճառ արտաքին ցնցման հետևանքով 1 տոկոսային կետով ՀՆԱ-ի նկատմամբ ընթացիկ հաշվի հաշվեմնացորդի վատքարացման՝ մասնավոր սպառման ծավալների աճը մեծացնում է այդ ճեղքածքը 1.39 տոկոսային կետով: Ներմուծման փոխարինման փոփոխականի գործակիցը թեև ստացել է բացասական արժեք, բայց նշանակալի չէ: